

ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հաստատում եմ՝

Ռեկտոր

Է.Ս. Սանդրյան

№ 282 « 27 » հունիս 2024թ

ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բակալավրի կրթական ծրագիր՝ 061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա

Դասիչ մասնագիտություն՝ 061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)

Համաձայնեցված է՝

Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ինստիտուտի տնօրեն

Ա.Ա. Դարբինյան



(ստորագրություն)

Մաթեմատիկական կիբեռնետիկայի ամբիոնի վարիչ


Ռ.Հ. Արամյան



(ստորագրություն)

Համակարգային ծրագրավորման ամբիոնի վարիչի ժ.պ.


Ս.Ս. Սարգսյան



(ստորագրություն)

Մաթեմատիկայի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչի ժ.պ.

Գ.Գ. Տոնոյան



(ստորագրություն)

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա կրթական ծրագիր, իրագործվող ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս- Հայկական (Սլավոնական) համալսարանի կողմից **061101.00.6» Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)»:**

Բակալավրի կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 4 տարի:

Բակալավրի կրթական ծրագրի ծավալը կազմում է 240 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ կրթական ծրագրի շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Ծրագրի նպատակն է ուսանողներին տալ հիմնարար գիտելիքներ մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և համակարգչային գիտությունների վերաբերյալ, զարգացնել համընդհանուր, ընդհանուր մասնագիտական և մասնագիտական կարողություններ, որոնք շրջանավարտին թույլ են տալիս հաջողությամբ իրականացնել մասնագիտական գործունեություն մաթեմատիկայի, ծրագրավորման, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և ավտոմատ կառավարման համակարգերի, ծրագրային ապահովման նախագծման և մշակման բնագավառներում, հաշվի առնելով տարածաշրջանային աշխատաշուկայի պահանջները, մասնագիտական միջավայրում հարմարվելու կարողությունը, ինքնակրթության և մասնագիտական զարգացման անհրաժեշտությունը:

Ծրագրի շրջանավարտների մասնագիտական գործունեությունն ուղղված է տեղեկատվության մշակման նոր մաթեմատիկական, ալգորիթմական և ծրագրային

մեթոդների կատարելագործմանը և ներդրմանը: Այս մեթոդները օգտագործվում են բարդ համակարգերի օպտիմալացման, վերահսկման, վերլուծության և մշակման, կանխատեսման, որոշումների կայացման և տեղեկատվական անվտանգության, արհեստական բանականության/մեքենայական ուսուցման ոլորտներում տարբեր խնդիրներ լուծելու համար: Նրանց աշխատանքը ներառում է տարբեր երևույթների մոդելների ուսումնասիրություն՝ արնդհատ, դիսկրետ և վիճակագրական, ինչպես նաև դրանց վերլուծության մեթոդներ, որոնք օգտագործվում են ռոբոտաշինության, թռիչքի մեխանիկայի, համալիր համակարգերի նախագծման ավտոմատացման, տեղեկատվական անվտանգության, կենսաբանության, տնտեսագիտության և այլ ոլորտներում:

2.2. Բակավրի կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ (նշել աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված պրակտիկայի ձևերը)

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝ ուսումնական;
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝ նախադիպլոմային:

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

- Ավարտական աշխատանքի պաշտպանություն:

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտելիքները՝

1. Կիրառական մաթեմատիկայի և համակարգչային գիտության հիմքում ընկած հիմնական սկզբունքների և տեսությունների խորը ըմբռնում, ինչը թույլ է տալիս կիրառել այս գիտելիքները խնդիրների լայն շրջանակ լուծելու համար:
2. Տվյալների վերլուծության և մաթեմատիկական մոդելավորման համար օգտագործվող տարբեր մեթոդաբանական մոտեցումների և գործիքների

իմացություն, ինչը թույլ է տալիս արդյունավետորեն լուծել գիտության, տեխնոլոգիայի և բիզնեսի կիրառական խնդիրները:

3. Ծրագրավորման և ծրագրային ապահովման մշակման ոլորտում ժամանակակից տեխնոլոգիաների և լավագույն փորձի իմացություն, որն ապահովում է արդյունավետ և հուսալի ծրագրային լուծումներ ստեղծելու կարողություն:

Հմտությունները՝

• գիտելիքի կիրառման հմտությունները՝

1. Կիրառական խնդիրների լուծում՝ օգտագործելով մաթեմատիկական մեթոդներ և ալգորիթմներ;
2. Ծրագրային ապահովման մշակում գործընթացների ավտոմատացման և օպտիմալացման համար:

• ընդհանրական իմացական հմտությունները՝

1. Վերլուծել և մեկնաբանել տվյալների մեծ զանգվածները, ներառյալ տվյալների վերլուծության գործիքների օգտագործման հմտությունները;
2. Գործնական խնդիրների լուծման մաթեմատիկական մոդելների մշակում և կիրառում:

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

1. ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

1. Հետազոտական նախագծեր ինքնուրույն կազմակերպելու և իրականացնելու և թիմում արդյունավետ աշխատելու ունակություն:
2. Տվյալների վերլուծության և մաթեմատիկական մոդելների հիման վրա պատասխանատու որոշումներ կայացնելը, մասնագիտական գործունեության մեջ էթիկայի չափանիշներին համապատասխանելը:

4. Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները .

- Գիտահետազոտական,
- Արտադրատեխնոլոգիական,
- Նախագծային,
- Կազմակերպչական-կառավարման:

5. Կրթական ծրագրի պահանջարկը.

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիրը իր կիրառությունների լայն շրջանակի շնորհիվ պահանջարկ ունի այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ֆինանսները, տեղեկատվական տեխնոլոգրիաները, ճարտարագիտությունը, գիտությունը և կրթությունը: Ժամանակակից աշխարհում ծրագրի շրջանավարտները մեծ պահանջարկ ունեն տվյալների վերլուծության և մեքենայական ուսուցման մեթոդներ կիրառելու ունակության շնորհիվ: Տեղեկատվական տեխնոլոգրիաների ոլորտի զարգացումը և ֆինանսական ոլորտի կարիքները մեծացնում են նաև այս ոլորտի մասնագետների պահանջարկը: Ծրագիրն ապահովում է կայունություն և կարիերայի հեռանկարներ, ունի պահանջարկ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում՝ նպաստելով թվային տնտեսության և նորարարության զարգացմանը: